

նալու համար վերոյիշեալ կանոնը, ի միտ
բերելու է հետեւեալը:

ԵՌԾ յետև իմ սատանայ, զի ոչ խոր-
հիս գու զԱստուծոյն, այլ զմարդկանա:

Եներկրայ զողով՝ որ այդ կանոնը Մշակն
չմոռանար՝ ընդ նմին ի հաւասար ճշնար-
դու-նեան Ա եհին ենթադրութեանը թէ է
հաւատոյն նուլանալը սուս-դիւ կրնայ
յառաջ բերել լեզուի խանդարումը, մեք
սիրելի ընթերցողաց դատողութեանը կր-
յանձնեմք քննել թէ որչափ սոս-դիւ է կամ
ճշմարիտ Մշակին առարկութիւնը այն
մասին՝ որ իրը թէ մի ազգի ճուլուսով մար-
զիկը օսարազդի լեզուաց սիրող ու ի-
րենցը պախարակող կլինին, իսկ անհրօն-
նելը անհաւանդուռ պաշտպան իրենց
մայրենի լեզուին:

Մեր շատ կցանկայինք դորա օրինակ-
ները լսել Մշակէն, այն ատեն ի հաւա-
տոյն նուլացողաց և լեզուն խանդարողաց
օրինակները չեինք դանդաղեր անջրելի
փաստերով ապացուցանել Երարատայ
յառաջակայ թերթերուն մէջ: Եւ նախ
կսկսէինք Վաղարէն, ուր Մշակին յօ-
դուածը իրը թէ ապաւորութիւն ըրած է:

Կազաչեմ, **Տէր,** սոյն
խորհրդածութեանը առ սէր ճշմարտու-
թեան տեղի տաք ձեր պատուական ու
ազգօղուաթերթին մէջ:

ՀԱՅԿՈՐԴԻ.

ՄԱԿԱՐ ԵՒ ԳԱՅՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅԻՆՔ

Ի 5Ն ամսոյս Գեր. Մակար Ա. Արքե-
պիսկոպոս ի Տիֆլիսայ վերադարձաւ ի
Ա. Եջմիածին, եւ Գեր. Գաբրիէլ Ա.
Արքեպիսկոպոս Այլազեանց ի 13Ն ամ-
սոյս գնաց ի Տիֆլիս Առաջնորդական
պաշտօնը եւս ստանձնելոյ համար:

ԱՏԵՓԱՆՆՈՍ ԶԱՆՈԽՄԵԱՆՑ

Ն Ա Կ Է Ր

ԽՈԲԱԴՐՈ-ՆԵԱՆ ԵՐԱՐԱՄ ԱԲԱԿԱԴՐՈՅ.

Աստրախանայ հայազն վաճառական Ստեփան-
նոս Գալստեան պարոն Զանումեանց շարժեալ
յԱզգասիրական զգացմանց՝ ի 28 նախընթաց
Փետրվար ամսոյ առաջի արար Հոգարարձութեան
Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ Հոգեոր
դպրոցաց ի նպաստ Օրիորդական Պալրոցի զին-
նուն և եօթն բուրլի քառասուն և ութ կոպէկ
արծաթի զստացեալ նովառ ի Քաղաքային Պը-
րամատանէ Աստրախանայ վաօն ծառայութեան
իւրոյ ի նմին Հոգարարձութիւնն մեծաւ յարգա-
նօք յայտնեաց պարոն Զանումեանց զգրաւոր
գոհունակութիւն ի զիմաց իւրոց համադասելով
զանուն նորա ի թիւս բարեգործ Անդամոց Օրի-
որդական Պալրոցի:

Զայսմանէ ծանուցանելով Խմբազրութեան Ա-
րարատայ՝ Խոնարհարար Խոնդրէ զնուիրագործու-
թինէ պարոն Զանումեանցի հրատարակել յէջս
ամսագրոյն յընդհանուր տեղեկութիւն բարենա-
խանձ Անդամոց Հայ Ազգիու

Հոգարարձուք Յովաէփ Ա. քհնց. Բունիաթեանց
Սարգիս Բուրժաւեանց
Ալմէսոն Պոլովեանց
Գրիգոր Ասդոմնեանց

Հմբ. 26

Է 16 Մ-Շ-Ռ 4876 ա՛.

ՅԱ.Աստրախան:

Ա.ԱՏՐԱԽԱՆՆԵՆ

ԽՈԲԱԴՐՈ-ՆԵԱՆ ԵՐԱՐԱՄ ԱԲԱԿԱԴՐՈՅ.

Ազգասիրական արժանագով փափադ Աստրա-
խանայ Հայազն Տէխնօլոգի Մկրտչի Ամբակումեան
Պ. Բուրջաւեանց՝ եհաս ցանկալոյ նպատակի իւ-
րում, զի ըստ թողարկութեան նորին Գերա-
զանցութեան Աստրախանայ Նահանդապետի դոր-

ծակցութեամբ Թատրօնասէր Հայաղանց՝ Տիկին Աննայի Պոչշեանց, Միքայէլի Բուրջապեանց, Մըկրտչի Լևիանեանց, Խաչատրոյ Դադաշեանց, Յովհաննու Մարգանեանց, Յակովիսայ Բուրջալանց, Քարաղամեանց, Հաղուբեանց, Բախրեանց Ազգից Վարելանց, Վուլգարեանց, Զալապեանց, Մէկիթեանց և Մէլքոնեանց ի 29 Յունվարի և յ 9 Փետրվարի ներկայ ամի երկից ներկայացց ի լեզուի Հայոց ի տան ձմեռային Թատրօնի յօդուտ Աստրախանայ Հայոց Հոգեոր ծխական Դպրոցաց՝ ողբերգութիւն Արշակ Երկրորդ, և զգոյացեալ դրամն բարձմամբ ծախուց՝ զերեք Հարիր ուժաւուն բուրլի (380 բուրլի) ընդ գրութեան իւրոյ ի 21 Փետրվարի առաջի արար Հոգաբարձութեան Դպրոցաց, յանձնելով և զմի արկղ զետեղմամբ Թատրօնական զգեասուց և պարագայից՝ արժուզութեամբ 214 բուրլի 16 կոպ. Հոգաբարձութիւնս ախորժ պարտաւորութիւն ինքեան Համարեալ յայտնեաց ի դիմաց իւրոց զգրաւոր զոհունակութիւն Պ. Մկրտչի Բուրջալեանց և զործակցաց նորա, Համամժուելով զանուն նորա ի թիւս բարեգործ անգամնց երկունո Դպրոցաց :

Զայտմանէ ծանուցանելով Խմբագրութեան Արարատայ՝ Հոգաբարձութիւնս խնդրէ խոնարհար, Հրատարակել յընդհանուր տեղեկութիւն Հայկեան ժողովրդոց զազգափափական զգացմանց Աստրախանայ Հայաղն երիտասարդաց :

Հոգաբարձուք Յալսէփ Ա. քհնց Յունիաթեանց
Արդիս Բուրջալեանց
Սիմէօն Պոսովիեանց
Գրիգոր Սողոմոնեանց:

Հմբ. 26

Է 46. Մ-րու 1876 թ.

Աստրախան:

Աստրախան

ԽԱՅԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԱԿԱՆ Ա ՀԱՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ար փութամ, թէւ ուշ, ուրախութեամբ սրտի յայտնել՝ որ արդէն հինգ ամիս է լինում՝ որ մեր Ախորդալարն ևս այլ քաղաքաց նման արժանաւ-

ցաւ վայելել Ազգասէր Գէօրգ Ա. եհավասի բարերարութեան այն շնորհը որ Հայրենասէր Հայրն իւր եռանգուն, անձնուէր հոգացողութեամբ հայսառանեաց եկեղեցւոյ երգեցողութեան անկեալ և խառնակեալ զրութիւնը վերանորոգելոց համար այնքան աշխատութիւն և ջանք գործ զրեց որով շնորհեց մեր Ազգին և Եկեղեցւոյ իւրեան յատուկ Հայկական Զայկազրութիւն, որու շուտափոյթ տարածման համար ևս ամենայն կարելի միջոց ձեսք է առած հասարակաց Հայրը :

Թէ ողբան անհրաժեշտ էր և ամենահարկաւոր մեր Եկեղեցւոյ համար Զայնազրութեան անարաւեստը՝ և թէ ո՛քան զովիլի էր Գէօրգ Ա. եհավասի ոյս մեծագործութիւնը այդ արդէն հասկանալի է այն անձանց որը խոչական և բազմակողմանի դատողութեամբ զիտեն զատել և զնահատել ամենայն բարի գործ :

Իսկ թէ ի նշ խորհուրդ և ի նշ հետեւանք ունի երգեցողութիւնը մարդկային բնութեան վերայի թէ ի՞նչպէս նրացնում, ազնուացնում և փափկացնում է մարդկային միրար և ողբան սուրբ և աղնիւ զգացումներ է զարգեցնում մարդուս մէջ կանոնաւոր երգասացութիւնը երբ լսելի է լինում՝ այն Աստուծոյ տաճարի մէջ ազգու քաղցր և զրաւիչ եղանակաւ՝ դորա վերայ աւելի խօսել աւելորդ ենք համարում մեր կողմից :

Առ այժմ մենք կանոնումներ յայտնել այն որ սկզբում՝ երբ նոր մուտ զործեց Ախալքալակում Զայնազրութեան արուեստը, երբ դեռ առաջին անգամ լսուեցաւ այն Եկեղեցւոյ և Աւատամարանի մէջ՝ շատ օտան և իւրթ թուեցաւ հասարակութեան. և ինչպէս ամենայն նոր բան՝ այդ ևս ունեցաւ իւր ատօղները և հակառակորդները, Ամանք ասումէին, — և աս նօժան բոլորովին անպիտան բան է եղած . . . այլք . . . թէ եղանակները շատ անձունի և զդուելի են, . եղան այնպիսիք՝ որք այնպէս էին կարծում՝ և այնպէս հաւատացնում ժողովրդեան՝ թէ նօժան մի օտարամուտ նոր ծէս է և զրանով մեր Եկեղեցւոյ քաղցր երգեցողութիւնը խապառ խանդարմիլու և կորսնմելու և բայց պատպիսի թիւր կարծիքներ և դատողաւթիւնները երկար շրտեւեցին,